



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»**  
**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 14 » հուլիսի 2021թ. 95-Ձ.

ք. Երևան

**«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ**  
**ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ**  
**ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎ Ի ՓՈՓՈԽՈՒՄՆ**  
**2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N°17-Ն ՀՐԱՄԱՆԻ**

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ «ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՕ -22 ԱՌ 08.02.2012Թ. ՕՐԵՆՔԻ 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԸ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N° 1060-Ն ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆՈՎ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ ստորաբաժանումների կողմից չափման միջոցների տեսակի հաստատման գործընթացի ուղեցույցը համաձայն սույն հրամանի Հավելված N° 1-ի:
2. Կատարել համապատասխան փոփոխություններ չափման միջոցների տեսակի հաստատման համար վճարման ենթակա աշխատանքների ցանկի և դրանց վճարման գների հաստատման մասին ՍԶԱՄ տնօրենի 2020 թվականի փետրվարի 18-ի N°17-Ն հրամանի Հավելվածում՝ համաձայն սույն հրամանի Հավելված N° 2-ի:
3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի առաջին տեղակալ Մ. Բզնունուն:

ՏՆՕՐԵՆ

ՔԱՆԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱԼԲԵՐՏ ԲԱՐՍՅԱՆ

Հավելված № 1

«Ստանդարտացման և չափագիտության  
ազգային մարմին» ՓԲԸ

տնօրեն

ժամանակավոր պաշտոնակատարի՝

№ \_\_\_\_\_ առ « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ հրամանի

**«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ  
ստորաբաժանումների կողմից չափման միջոցների տեսակի հաստատման  
գործընթացի ուղեցույց**

1. Չափման միջոցի տեսակի հաստատման համար ներկայացված հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի լրակազմի ստուգում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ ստանդարտացման և չափման միջոցների տեսակի հաստատման բաժնի կողմից:
2. Հայտատուի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության դեպքում, հայտատուի համաձայնությամբ, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ մարմնի ոլորտային ստորաբաժանումների համապատասխան մասնագետների և փորձագետների հետ անհրաժեշտ փաստաթղթերի կազմում՝ համաձայն «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ մարմնի սահմանված գնացուցակի կամ պայմանագրի:
3. Հայտի և կից փաստաթղթերի ստուգումից հետո իրականացվում է հայտի փաստաթղթերի լրակազմի փորձաքննություն «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ մարմնի ոլորտային ստորաբաժանումների համապատասխան մասնագետների և փորձագետների կողմից:
4. Հայտի փաստաթղթերի լրակազմի փորձաքննությունից հետո իրականացվում են.
  - 4.1 Տեսակի հաստատման փորձարկումներ՝ համաձայն հաստատված փորձարկումների ծրագրի:
  - 4.2 Փորձարկումների արդյունքում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ ոլորտային ստորաբաժանումների համապատասխան մասնագետների և փորձագետների կողմից ներկայացված չափման միջոցների չափագիտական բնութագրերի համապատասխանության ստուգում սահմանված և հայտարարված պահանջներին, ստուգաչափման մեթոդիկայի և միջստուգաչափման ժամկետների որոշում:

- 4.3 «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ ոլորտային ստորաբաժանումների համապատասխան մասնագետների և փորձագետների կողմից փորձարկումների արձանագրության կազմում և հաստատում, ստուգաչափման մեթոդիկայի և միջստուգաչափման ժամկետի հաստատում, տեսակի նկարագրի ձևակերպում:
5. Կատարված աշխատանքների արդյունքում տեսակի վկայագրի կամ սերտիֆիկատի ձևակերպում և ներկայացում հաստատման:
6. Հաստատված չափման միջոցի տեսակի գրանցում Չափման միջոցի գրանցամատյանում:

Հավելված № 2

«Ստանդարտացման և չափագիտության՝  
ազգային մարմին» ՓԲԸ

տնօրեն

Ժամանակավոր պաշտոնակատարի՝

№ \_\_\_\_\_ առ « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ հրամանի

**Չափման միջոցների հաստատման վճարման ենթակա աշխատանքների  
ցանկի և դրանց վճարման գները**

Իրականացվող աշխատանքը	Աշխատանքի համար վճարի գումարի չափը (դրամ)	Ծանոթություն
Փաստաթղթային ձևակերպում	3000	Մեկ հայտի համար
Նախկինում տեսակը հաստատված չափման միջոցի փաստաթղթային նույնականացում	5000	Մեկ տեսակի համար
Չափման միջոցի տեսակի հաստատման փաստաթղթային փորձաքննություն	10000	Մեկ տեսակի համար
Չափման միջոցի տեսակի հաստատման փաստաթղթային փորձաքննություն	15000	Բարդ ֆունկցիոնալ չափման միջոցի մեկ տեսակի համար
Չափման միջոցի տեսակի հաստատման փաստաթղթային փորձաքննություն	20000	Բարդ չափողական համակարգի մեկ տեսակի համար
Չափման միջոցի տեսակի հաստատման փորձարկում	Ոչ պակաս համապատաս- խան չափման միջոցի ստուգաչափման	Մեկ տեսակի համար

	գնից կամ ըստ պայմանագրի	
Ստուգաչափման մեթոդիկայի մշակման խորհրդատվություն	10000	Պարզ միասահման չափման միջոցի մեկ տեսակի համար
Ստուգաչափման մեթոդիկայի մշակման խորհրդատվություն	15000	Բարդ ֆունկցիոնալ չափման միջոցի մեկ տեսակի համար
Ստուգաչափման մեթոդիկայի մշակման խորհրդատվություն	20000	Բարդ չափողական համակարգի մեկ տեսակի համար
Չափման միջոցի հաստատված տեսակի փոխադարձ ճանաչման աշխատանքների կատարման, սերտիֆիկատի տրամադրման, ինչպես նաև սերտիֆիկատի գործողության ժամկետի երկարացման աշխատանքներ	400 եվրո կամ համապատասխան ՀՀ դրամ	Մեկ սերտիֆիկատի համար